«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 11.1 Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները

1. Հանձնաժողովը վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթն իրականացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով, ճյուղային օրենքներով և հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերով սահմանված առանձնահատկությունները:

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելը, հարուցելը մերժելը, տուժող ճանաչելը, վարույթը կամ հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը, վարույթը կասեցնելը, նյութերը քրեական հետապնդման մարմնին հանձնելը, վարույթը վերսկսելը, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նշանակելը, քննությունը հետաձգելը, վարույթի ժամկետը երկարաձգելը, ինչպես նաև վարույթները միացնելը և անջատելն իրականացվում է գրությամբ՝ պահպանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով համապատասխան որոշումների բովանդակությանը և դրանք վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներին և օրենքով նախատեսված անձանց ուղարկելուն վերաբերող պահանջները:

3. Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին մասնակցող անձինք օրենքով նախատեսված իրենց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության մասին տեղեկացվում են գրավոր:

4. Հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի շրջանակներում անցկացվող քննարկումները և նիստերը, ինչպես նաև ճյուղային օրենքների, հանձնաժողովի իրավական ակտերի, հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիայի պայմանների կատարման վերահսկման, հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների ու տեղեկությունների հավաստիության ուսումնասիրության նպատակով իրականացվող դիտարկումներն արձանագրվում են: Արձանագրությունների կազմման կարգը և պայմանները սահմանվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հանձնաժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտով;